ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ

Ճեմարանն աւարտող սաները բան նախկին սովորութեան հոգեհանգիստ կատարեցին Ճեմարանի անմահ Հիմնադրի գերեզմանի վերայ ս. Էջմիածնի ածնի օրը, պատարագից անմիջապէս յետոյ Մխիթարեանք և խուռն բազմութեան ներկայութեամբ։ Իւր ընկերների կողմից յուզուած շեշտերով՝ դէպի հանգուցեալ Հիմնադրի շիրիմը, ներկայ Վեհ. Հայրապետն ու Մխիթարեանը խորին երախտագիտութիւն և Ճեմարանի աւանդած գաղափարներին հաւատարիմ մնալու ջերմ իղձ արտայայտող մի ճառ կարդաց Ակնեցի Բարութիւն Մաքսուդեան։ Յաջորդ հինգշաբթի օրը աւարտող սաները Ճեմարանի տեսչի օգնականի առաջնորդութեամբ ներկայացան Վեհափառ Հայրապետին և Նորին Սրբութեան օրհնութիւնն ու իրենց մրցանակագրերն առնելով՝ ցրուեցին զանազան կողմեր։ Նորին Վեհափառութեան վերջին պատուէրը ժամանակի ընթացքում ի կատար ածելու յուսով, որ էր՝ հայ ժողովրդից վկայական ստանալ մի օր, թէ արդիւնաբար կերպով գործ են դրել իրենց ստացած հոգևոր կրթութիւնը։

Նորին Վեհափառութեան օրը. կոնդակով, որի պատճէնը ստացում է Արարատի ներկայ համարում՝ ընդունուեցաւ Ճեմարանի տեսուչ Մեծ. պ. Կարապետ Կոստանեանցի հրաժարականը և փոխարէնը յունիս 30, թ. 298 ս. կոնդակով տեսուչ կարգուեցաւ նախկին տեսչի օգնական Կարապետ վարդապետ։ Պ. Կոստանեան մեկնեցաւ ս. Էջմիածնից յունիս 6-ին։ Մինչև Երևան գնացել էին ճանապարհ գնելու համար Բարձր. Գարեգին Սաթունեան։ Աշտ. Կարապետ և Գարեգին Յովսէփեան վարդապետները, Ճեմարանի ներկայ եղող ուսուցիչներ պ. Յովհաննէս Յովհաննիսեան և Ս. Բարութիւնեան և քարտուղար Կ. Քոչարեան։ Սրտայոյզ էր մանաւանդ և ներկայ եղողների համար անմոռաց կմնայ պ. Տեսչի վերջին հրաժեշտը աշակերտներին։ Վաղարշապատի այգիների մօտ, ճանապարհի վերայ։ Ապագան կպարզէ մի օր, թէ ինչ է եղել և ինչ արդիւնք է թողել պ. Կոստանեան Ճեմարանի համար այս 5 տարուայ ընթացքում։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրութեամբ Ճեմարանում մնացած աշակերտներից 20 հոգի Արժ. Գարեգին վարդ. Յովսէփեանի հսկողութեան ներքոյ հաւիճ ուղարկուեցան և 14 հոգի Բիւրական ամարանոց։ Մի քանի փոքր խումբեր ևս ճանապարհորդելու են ուղարկուած՝ դէպի Անի. դէպի Սևան ու Սանահին։

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ.

Մայր Աթոռի Մատենադարանի համար շնորհակալութեամբ ստացել ենք հետևեալ գրքերը.

ՁԵՌԱԳԻՐ

1. Պ. Երուանդ Նանազիզեանից.—Պատմութիւն Եւսեբիոս (Սեբէոս Է. դարու) եպիսկոպոսի—Նոր Նախիջևանից, Հ. Մուշէ վարդապետի միջոցով։

ՏՊԱԳԻՐ

Պ. Յովակիմ Զարարարեանից

1. Անկանոն դիրք Հին Կտակարանաց.
2. » » Նոր Կտակարանի.
3. Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվաւեր գրոց վերայ, Հ. Բ. Սարգսեանի.
4. Պատմութիւն հայկական տպագրութեան.
5. Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան Schrumpf-ի յայտնի գրքի թարգմանութիւնը։
6. Մեղուաբուծութիւն—Հ. Մ. վ. Քաջունու.
7. Ճերամաբանութիւն—Հ. Մ. Վ. Քաջունու.
8. Դիտ. ա. քահ. Աղանեանից իւր Գիւան Հայոց Պատմութեան, Գիրք Գ.
9. Դպիր Միհրդատ Երևանցեանից իւր գրած Ուղղութիւն Առաջնորդին Հայոց Պարսկ. և Հնդկաստ. Տէր Մաղաքիա եպիսկոպոսի Տէրունեան.
10. Պ. Պերճ Պոշչանցից իւր գրած Մեր Խէյշն.
11. Բարեգործական Ընկ. խորհրդից—Տեղեկագիր Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան 1898 թ. երկու օրինակ։

Մատենադարանապետ՝

Գ. Վ. Յովսէփեան։